

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՈ Ա.Պ.Ա.ՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈԾ ՊԱՏՄՈՒԹՅԻՒՆ.

(Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ, Ա. Շ-Շ-Շ, 1886 թ. Ա. )

## ԴԼ; Գ.

—

Սահակ Դ. Վահրապատում ներկայացաւ Նահ-Աբասին և խոսացաւ վճարել տարեկան հարիւր թուման պարտքը՝ որ Մելքիսէթ բարդել էր կծմիածնոյ վերայ: Որովհետեւ Նահ-Աբաս շուտով Բաղգատի վերայ պէտք է արշաւէր՝ Սահակ ևս հետեւց նորան, և Բաղգատում ստանալով կաթուղիկոսութեան հրտվարտակը՝ վերագարձաւ Առաջան՝ հարկապահանջներին գոհացնելու համնք տեղւոյն հայերից զբամ ժողովելու, Հայք ոչ միայն ոչինչ չը տուին, այլ և յինդունեցին Սահակի կաթուղիկոսութիւնը, և Դաւթին՝ որ գեռ կենդանի էր, ու զարկեցին Բաղգատ, որ նա կաթուղիկոսութեան իրաւունք ստանայ: Դառիթ Բաղգատ հասնելուց յետոյ տեսնելով թէ իւր խնդիրը լսելի սկսի յըլինի, ձեռքից թէ իրան շնորհուած գիւղի արդիւնքը անարգել ստանալու համար է զիմել Նահ-Աբասին, իսկ Սահակ Դ. կաթուղիկոս յայտնելով Նահին թէ Զուղայեցի հայք չեն ընդունում իւր կաթուղիկոսութիւնը երկրորդ անգամ հրտման ստացաւ համարձակութեամբ վարել իւր կաթուղիկոսութիւնը, բայց այս անգամ ևս ընդունելութեան չարժանանալով ու տեսնելով թէ կաթուղիկոսութեան համար նշանակուած հարկը ծանրանումէ իւր վերայ, ծածուկ փախաւ Վան, ուր երբ լսեց թէ հաճութեամբ ազգին Մովսէս վարդապետը ընտրուել է կաթուղիկոս՝ Զանահնար եղաւ որ ինքն ևս Օսմանեան Հայոց վերայ վարէ կաթուղիկոսութիւն: Հայք շատ աշխատեցին յետո կոսեցնել նորան այս երկպառակից խորհրդից՝ խոստանալով տալ տարեկան երեք հարիւր զահեկան և Քուռքաշի վանքը ի բնակութիւն, սակայն Սահակ Դ. անլուր ժողովրդեան ձայնին, ոռ ոչինչ համարելով Մովսէս կաթուղիկոսի սիրայորդոր թղթերն ու նորա նուիրակ և յաջորդ Փիլիպպոս վարդապետի ջանքը, Խոյ Յովհաննէս կաթուղիկոսի եղբօր որդի՝ իւր կուսակից Պօղոս վարդապետին ուզարկեց Կ. Պօլիս և տեղւոյն Զաքարիա պատրիարքի ձեռքով, որ Մովսէսի հակառակութին էր, Յուլթանից ստացաւ հրտվարտակ Մշոյ Սուրբ Կարա-

պետի վաճքում՝ կաթուղիկոսութիւնն վարելու Տաճկահայոց վերայ:

Մահակ այս հրովարտակին ստանալուց յետոյ գնաց Տիգրանակերտ՝ ուր էր եպարքոսը, իւր ստացած հրովարտակը նորան ևս վաւերացնել տալու, խոստանալով 1000 դաշեկան ի շահ արքունի գանձուն. Մովսէսի կուսակիցներն և այ որոնց զլխուորներն էին եպարքոսի հանգերձապետ Երեմիա, Մաքուտ և Ռուհիջան, աղերսագիր մասուցին՝ խնդրելով որ Հայ ազգը 1000 դաշեկանի ըլ վաճառէ Մահակին՝ հաստատելով նորա հրովարտակը:

Եպարքոսը մանաւանդ զայրացած որ Մահակ տռանց իւր գիտութեան ուղղակի սուլթանից է հրովարտակ ստացել, հրամայեց գանհակոծ անել նորան ու Պօղոս վարդապետին և տանջանօք ստիպել նոցա ու բանալ քրիստոնէութիւնը: Մովսիսեանք կասկածելով որ մի գուցէ Մահակ և Պօղոս ընդունեն մահմետականութիւն, զիմեցին եպարքոսին և աղատեցին նոցա: Մահակ մի քանի օր ևս Տիգրանակերտում՝ մնալուց յետոյ եկու Էջմիածին և առանձնացած բոլորովին՝ զղջմամբ և աղաւխարութեամբ անցրեց իւր կեանքը, մինչեւ որ Մովսէսի յաջորդ Փիլիպոս կաթուղիկոսի օրով 1639 թուին ծանր հիւանդութեամբ տառապեալ գնաց տաճարը և Խջման Առորբուեղի առաջ ի գուճո անկեալ տղօթեց, խոստովանուեց ու հաղորդուեց և նոյն զիշերը վախճանուեց:

Մովսէս Գ. \*) Միւնեաց Յաղաց գաւառի Խոտանան զիւղից էր, ի մանկութեան Սրապիոն կաթուղիկոսին աշակերտելով, նորա հրամանով յանձնուեց Կեսարացի Վրիգոր վարդապետի խնամոց և ուխտի աղաքաւ Երուսաղէմ գնացած լինելով՝ տեղւոյն Ասրգիս Պարոն - Տէր կոչեցեալ և Կիրակոս վարդապետներին, որոնք կամենումէին առանձին անապատ հաստատել՝ խորհուրդ տուեց Միւնեաց երկրում, բուն Հայաստանի մէջ հաստատել, խոստանալով հայրենիք վերադառնուլուց յետոյ միաբանակցել նոցա, իսկ ի՞նքն Ս. Յարութեան տաճարում բաւական ժամանակ լուսարարութիւն անելով տեղւոյն ժամակարգութեան հմտանալուց յետոյ շրջելով Ասորւոց և Եղիպատացւոց վանքերը, ուսումնասիրեց նոյս վանական կանոնները, և վերադառնալով Կ. Պոլիս՝ հայազգեաց խնդրանօք տեղւոյն պատրիարք և իւր ինամակալ Կե-

\*) Եռաքել պատմ. զլ. ԻԴ.

սորացի Գրիգոր վարդապետից ծայրագոյն վարդապետի աստիճան և քարոզելու գաւաղան ստացաւ ու սկսեց քարոզել Կ. Պօլոսոյ հոյ եկեղեցիներում։ Մի քանի տարուց յետոյ Սովոչօ նոյն Գրիգոր Կեսարացու յանձնարարութեամբ գնաց գաւառները քարոզելու, և այսպէս համելով Տիգրանակերտ՝ համբուրեց իւր ուսուցիչ Արտապիսն կաթուղիմոսի գերեզմանը և Վանի ու Գոլիրիմի վերայափ եկաւ Տաթեւ, ուր պատշաճաւոր ընդունելութիւն ցըգանելով՝ գնաց Սարգիս Պարոն։ Տէրի հաստատած Մեծ կոչեցեալ անապատը իւր խստման համեմատ ի միարանակցութիւն։

Մովսէս բնակութիւն հաստատելով Մեծ-Անապատում՝ յաճախ շրջու մէր գաւառները, և քարոզումէր Աստուծոյ քանը. նա յանդիմանելով հոգեորականաց և ժողովրդոց հակառակ իրանց կոչման և քրիստոնէական կրօնին վարքն ու բարքը, յորդորումէր քրիստոնէարար կեանք վարել և իրանց կոչման պարտականութիւնը ճանաչել, և այս խոկ պատճառով ատելի էր դարձած մեծամեծներին։

Մովսէսի այս վարմունքը տեղի տուեց անբաւականութեան. որովհետեւ հօգեորականք, թողնելով իրանց խոկական պարտականութիւնը, հարկահանի, գիւղաւագի (մելիք), մատնիցի և հարստահարուղի պաշտօն էին կատարում աշխատելով յօրանալ աշխարհային շքով ու ահացուցիչ խստութեամբ։ Այս տխուր վարմանց նախագաղափարն էին Մելքիսէթ կաթուղիկոս, որ արգելեց Մովսէսին այլ ևս ցըքարոզել, թէ և դարձեալ թոյլ տուեց, և նորա եղբօր որդի Ատհակ, որ նուիրակութեամբ գնացած լինելով Դալրիմոյ կողմերը՝ արգելեց Մովսէսի ընկեր Պօղոս վարդապետին ցըքարոզել։ Եկեղեցականաց և աշխարհականաց այս օրինակ անկմամբ եկեղեցիք և վանորայք համարեա անմարդաբնակ և կիսաւեր զրութեան մէջ էին \*):

\*). Եսկ եկեղեցիք և վանորայք, ամենեքեան անշուք և անպատիք բնակն կողապտեալք ի զարդուց և ի սպասուց, մինչ զի և սուրբ սեղանն ևս ամենենին մերկ և բաց, Բազմաժամանակեայ փակեալ դրամիք, խաւար և անլոյս, լուեալ ի պաշտամանց և ի պատարագաց, աւերեալ և խախտեալ շինուածք նոցա, տանիք և որմունք, իրըև զանտէր և այրի զրկեալ ի փեսայէն և օտարացեալ յորդւոց նստեալ թախծեալ ոգւով և անմիսիթար լսյր ընդերեսս մարդոց և Առաքել պատմ. (եր. 222).

Մովսես հալածուած Մելքիսէթից՝ երբ Երե անից անցնելլով կամենումէր գնալ Կարին, իւր հեղահամբոյր բնաւորութեամբ շատ հաճելի եղաւ Երե անայ Ամիրզիւնէ խանին և նորա հարկեցուցիչ պատուէրին հնազանգելով՝ տեղի կալաւ տեղւոյն Աաթուզիկէ եկեղեցում՝ և վերջապէս հաստատուեց տեղւոյն Անանիա առաքելոյ մենաստում, այս իսկ ժամանակ Մելքիսէթ նեղուած հարկադաշններից նորան եղիսկուպոս ձեռնադրեց՝ յանուն նորա և եռոնօրչնէք հրատարակելով:

Ամիրզիւնէ խանը, որ շատ սնգամ այցելել էր Մովսես վարդապետին՝ միանգամ ևս Պարսկաստանից նոր եկած մի այլ խանի հետ այցելեց նորան: Խաները այս անգամ նուէր ստացան Մովսեսի սպիտակայրած մեղրամոմերից եօթն եօթն հատ, հիանալով մամերի գեղեցկութեան վերայ, բնծայ ուղարկեցին Բաղդատ Շահ-Աբասին, որ շատ հաւանելով՝ իւր մօտ կանչեց Մովսես վարդապետին և պատուէր տուեց գնալ Ասպահան: Այնուղ արքունի ծոռանիերից երկուսին ուսուցանել իւր արհեստը: Մովսես աթէ ամառում թագա: որի պատուէրը կատարելուց յետոյ իւր աշակերտների հետ գնաց Վահրապատ, որ վերադրձել էր Շահ-Աբաս, և հայադգի Խօջանազարի միջոցաւ ներկայացնելով շահին իւր աշակերտները նորու ուատուէրին համեմատ Զրօրչնեաց հանդէսը ի ներկայութեան նորա փառաւոր հանդիսով կատարելուց յետոյ հրովարտակով էջմիածնի լուսարարութեան իրաւունքը ստացաւ և 1727 թ. հասաւ Էջմիածնի ու անմիջապէս Վարդավառի պահոց երկուշաբթի օրը ձեռք զարկեց Էջմիածնի նորոգութեան, որ կաթուղիկաների նորեանում բնակելուն կամ աստանգական շրջելուն համար բալորովին ամայացած էր \*):

\*) Արպէս ասէ մարդարէն Դաւիթ թէ, արարին զԵրուսաղէմ որպէս հիւղս մրգապահաց, և Եսայի մարդարէն ասէ վասն սիովնի իրրե զՀովանի ի մէջ սեխենեաց: ըստ այսո՞ւ սարասի գողցիս և զաստուածաբնակ սուրբ աթոռս, ոչ զիրը, զի ոչ էր անդ ժամ ասել և կամ ընթերցումն, ոչ զգեստ և շուրջառ, զի ոչ էր ժամակարդութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի Էջման Տեղն և սուրբ Սեղանն ոչ ունեին ծածկոց, ոչ կանմեղք, զի ոչ գոյր լցու, այլ հանապազ ի խաւարի, բայց պյլազգի մահմետական օմն վառէր զջրագ ձիթոյ և գնէր ի վերայ րեմին և այն ևս երբեմն երբեմն, վասն անցաւոր ճանապարհորդաց, զի տեսանելով զայն՝ ողորմութիւն արասցեն նմա: ոչ խնկարկութիւն, զի ոչ գոյր բռւրվառ և խունկ, և սալարկ յատակ

Մոլոկու զեռ լուսարարութեան ժամանակ նախ՝ շուրջանակի պարագեց վանքը։ Հիւսիսային և արեւմտեան կողմբ՝ միաբանից համար սենեակներ շինեց, արեւմտեան կողմբ՝ կաթուղիկոսարան և հիւրանոց, իսկ հարաւային կողմբ՝ սեղանատուն, փուռն, ցորենի ու այլ մթերից շանմարան և անտեսատուն, յետոյ նորոգեց Մայր Տաճարի քանդուած և քայլքայտուծ տեղերը։ Յովհաննավանքում գոյրանոց բաց արեց ուսուցիչ կարգելով Վժանեցի Մել-

եկեղեցւոյն քանդքանդեալ եղեալ որջ զեռնոց և սողնոց. և մեծամեծ լուսամուտքն զորս ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի, ուստի մտեալ իներքս թուշունք լնուին զեկեղեցի ծոտովք և ծղովք և այլ դռեխովք. զոր յամենայն աւուր հարկիւ սրբէաք. և ընդ այդն ընդ առաւոտն իլուսանալն ձայնք թաշնոց խափաներ զձայն ժամասելոյն։ Խոկ յարտաքուստ կուսէ գլուխ կաթուղիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն՝ քանդքանդեալք և քարինքն թափեալք. և որմոց յատակաց վէմքն փշրեալ և ծակոտեալ։ Եւ ի վաղեմի ժամանակաց որ շորջ զեկեղեցեաւն շինութիւն եղեալ էր, և դարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց փլուղեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիքն, որ յամենայն կողմանց շորջ զեկեղեցեաւն եօմն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն և հողն՝ եկեալ և ծածկեալ էր զիմունս և զաստիճանս եկեղեցւոյն, որք կան յարտաքուստ կողմանէ։ Խոկ զարդք և սպասք և անօթք եկեղեցւոյն և կամ տան՝ բնաւ ոչ գոր, զի զոր ինչ լեալ էր ի հին ժամանակաց, կաթուղիկոսքն զամենայն վաճառելով և զրաւ գնելով՝ վատնեալ էին, և արդ՝ ևս զրաւ եղեալ անօթք գոյին առ մաշմետական իշխանու, զայս աղատեաց Մովսէս վարդապետն. որ էր աջն Արիստակէսի հայրապետին՝ որդւոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ այլ և զաջ նզջոց վանաց սրբոյն Ստեփաննոսի, ընդ որոց և խաչ և սկիչ և բուրժառ և շուրջառ և այլ ևս ինչք.

\*Եւ ասացեալ բանքս՝ որք ի մէնջ ցուցանեն զտեղին անբնակ գոլ ի մարդկանէ և ասեմ զիսկն, ոչ էր ամեննեին անբնակ, այլ դու համարեա իրեւ զանբնակս, վասն զի կաթուղիկոսունքն՝ անդ յէջմիածին ոչ բնակէին, այլ յերեան քաղաք ի Կաթուղիկէ յեկեղեցւոջն, և կամ ի շրջագայութիւնս աշխարհաց, բայց սեազլուիք ոմանք սինլքորք և գռեհիկք, որպէս զգեղական հողակործս, որք վարնորդ մշակօք բնակէին յէջմիածին։ Եւ յորժամ Մովսէս վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսէին վասն հողոյն և մոխրոյն, որ լլրացեալ կայր շորջանակի, թէ զիարդ լինի պեղել. բայց որովհետեւ կամքն աստուածային քաղցրացեալ էր՝ և ձեռնարկութիւն գործոյն նորին հաճութեամբն էր զիւրեաւ հնարիւ եղեւ բարձումն հողոյն, վասն զի ածին ջուր իդեացյն յորդ և վարար և կապեցին ի կողմն ինչ հողոյն, և բազում մշակս արկին ի գործս, և սկսան մշակքն փորել զհողն և արոր տալ ջրոյն, և այնպէս առնելով՝ ջուրն առեալ զհողն տանէր և քարն

քիսէթ վարդաղետին, որ հմուտ էր փիլխոսփայտկան և տոմարական գիտութեանց. իւր աշակերտաներին շինութեան և բարեկարգութեան պատուէր տալով՝ զանազան կողմեր քարոզութեան տղարկեց. Նուտով վանքերը սկսեցին բարեկարգուել. եկեղեցական բարեկարգութիւնը և ժամակարգութեան վայելցութիւնը բոլորի համար ևս առաջին հօգս գտրձաւ:

Մովսէսի մեծագործութեան համբաւը տարածուեց ամենայն տեղ, և բոլոր հայք կամենումէին որ նա կաթուղիկոսանայ. իսկ նուս թէ և առարկելով թէ անկարող է, հրաժարվումէր, բայց երբ մհառւ Շահ - Արտա՝ գնաց Ասովահան և հաճելով նորա յաջորդ Շահ - Աէֆիի կամքը, հրովարտակով վերցրեց Եջմիածնի վերայից Մելքիութի բարգած հարիւր թումանի տարեկան հարկը և Խոջա - Նազարի ձեռքով ստացաւ Շահ - Աէֆիից կաթուղիկոսութեան հրովարտակ, այնուհետև անհնարին եղաւ այլ ևս բնդդիմանալ և հրաժարուել. Մովսէս խոնարհելով ամենայն կողմից տեղացող թախանձագին խնդրանաց 1629 թուին Յունուտրի 13ին կաթուղիկոսական սուրբ օծումն ընդունեց Մովսէս Գ. անուամբ:

Մովսէս Գ. սուրբ օծումն ընդունելուց յետոյ աւելի ևս շինութեամբ և բարեկարգութեամբ զբաղուել սկսեց. 0սմանցւոց և Պարսից մէջ պատերազմ՝ յուղուած լինելով՝ շատ գերիներ ազտակեց. Եջմիածինը հարստացրեց և պայծառացրեց. եկեղեցական ժամակարգութիւնը ընդարձակեց բուն օրհնութեանց վերայ քաղուածներ ևս աւելացնելով, որովհետեւ առաջ օրհնութիւնները առանց քաղուածքի էին ասում \*). երեք և կէս տարի միայն վարելով հայրապետական իշխանութիւնը՝ Երեանում վախճանուեց 1632 թուին Մայիսի 14ին և թաղուեց տեղւոյն Կողեւ կոչեցեալ գերեզմանոցում \*\*):

Մայր. որ իսակաւ աւուրս փութանակի յամենայն կողմանց բարձաւ հողն, և բացաւ վայրն ամենայն. և եղև հարթայատակ գետին և մնացեալ քարինքն շարեցան ի յորմն տանցն, լեալ ձեռնտու գործոյն « . . . . Առաք. պատմ. եր. 232—234.

(\*) Հահ - Խաթունեան Ստորագը, Կաթ. Եջմիածնի Ա. հատ. եր. 218:

(\*\*) Հ. Միքայէլ Զամշեան անյայտ աղբիւրներից առնելով գրումէ որ Մովսէս ընտանութիւն է ունեցել Աւիթուաց հետ, և հպատակութեան

Մոլոէս վախճանուելիս իրան յաջորդ առաջարկել էր իւր աշակերտ Աղբակայ Էրնկան գիւղացի Փիլիպպոս վարդապետին՝\*) որ ի մանկական տիոց սիրահար լինելով կրօնաւորութեան 14 տարեկան հասակում կամեցել էր մանել ի միաբանակցութիւն Տաթևու Մեծ - Անապատին։ բայց իւր անչափահաս լինելուն համար մերժուել էր։

Մեծ - Անապատի հիմնադիր և վանահայր Ասրդիս վարդապետ Պարոն - Տէր տեսնելով Փիլիպպոսի սրտեռանգն փափազը դէպ ի կրօնաւորութիւն յանձնեց նորան Մոլոէս կաթուղիկոսին՝ երբ նա գեռ վարդապետ՝ քարոզութեամբ շրջումէր։ Փիլիպպոս Մոլոէսի մօտ ուսանելով չափահաս լինելուց յետոյ նորանից արեւայ ձեռնապրուեց, ստացաւ վարդապետական գաւազան քարոզութեան և 1629 թուին ձեռնապրուեց եպիսկոպոս։

Փիլիպպոս հաճութեամբ ազգին 1633 թուին Յունվարի 13ին օծուեց կաթուղիկոս, 1635 - 1636 թուին եղած Տաճկաց և Պարոնից պատերազմների ժամանակ Էջմիածնի փայտածածք շինութիւնները բոլորովին աւերուած լինելով՝ նորեց մեծ մասաւր քարու կրով շինեց։ որ պատերազմական արհաւրաց ժամանակ դի-

---

Թուղթ է գրել առ պապն Հռովմայ. դնումէ և Գրիգոր Կեսարացու թուղթը առ Մոլոէս կաթուղիկոս, որով, որպէս թէ Կեսարացին ցաւ է յայտնում որ Մոլոէս ընտանութեամբ է վարվում Քաղկեդօնականաց հետ (Հատ. Գ. եր. 610—612)։ — Առաքել պատմագիր (զԼ. ԻԴ. ) Սիմէօն Կաթուղիկոս (Զամբռ զԼ. Պ. ) ոչինչ չեն գրում այս մասին և ընդհակառակն երանելի են կոչում Մոլոէսին. մինչդեռ՝ եթէ փոքր ինչ կասկած ունենային Մոլոէսի մասին՝ իրանց յայտնի ատելութեամբն առ պապականս յայտնի է թէ ինչ ոճով պիտի խօսէին։ Ոչինչ չէ գրում նաև Ըահ - Խաթունեան (Ստոր. Կթղկ. Էջմ. Հատ. Ա. եր. 217—218)։ Հ. Զամշեանի հետեւղ է նաև Հ. Եղնատ. Փափազ. (Եկեղ. Պատմ. եր. 872)։ Հ. Զամշեան հայ հայրապետներին պապականութեան հակամէտ ցոյց տալու համար միշտ շեղուելով բուն ազգային պատմական աղբիւրներից՝ իւր պապը զովացնումէ լատին աղբիւրներով կամ անորոշ « Յիշատ. Թուղթք. Պատմ. » բառերով՝ որոնց հաւատարմութիւնը իհարկէ կասկածելի է։ Ոչ լատին և ո՛չ յիշեալ անորոշ աղբիւրները և ոչ իսկ այս կամ այն կաթուղիկոսի համակրութիւնը կարող են ապացոյց լինել համակրութեան առ պապական աթոռն, քանի որ Հայաստանի այց եկեղեցւոյ ամբողջութիւնը զոհելով ամենայն բան՝ ցայսօր մնացել է ինքնուրոյն, աղատ և անկուփ եփեղեցի։

(\*) Առաքել Պատմ. զԼ. ԻԵ.

մանան։ Նորից շինեց Տաճարի արեւելեան կողմի սենեակները, նորոգեց եկեղեցւոյ տաճիքը, սալարկել տուեց եկեղեցւոյ շուրջը և սենեակների առաջը. Երեւանայ Անանիա Առաքելոյ անապատը, որ փայտաշէն լինելուն համար աւերուել էր։ Նորից քար ու կրով շինեց. 1637 թուին զնաց Ասպահան տեղւոյն հայերի նուէրներն ստանալուց և Էջմիածին ուղարկելուց յետոյ, Ասպահան գաղթած երեւանցւոց օգնութեամբ արքունի Հրովարտակով Ա. Էջմիածին բերեց Ա. Լուսաւորչի Աֆր՝ որ Շահ - Արաս այլ նուիրական սրբութեանց հետ Մելքիոէթ կաթուղիկոսի ձեռքով ուղարկել էր Ասպահան։


Փիլիպոս Յովհաննայանքում՝ եղած դոյրանոցը փոխադրեց Էջմիածին և աւելի քարեկարգեց. Ա. Հոփոմիմէի և Ա. Գայիանէի վանքերը, որ կիսաւեր էին, որովհետեւ տանկիները փուլ եկած՝ միայն որմերն ու սիւներն էին մնացել, նոր նորոգեց. և ջրի սղութիւն տեսնելով Արագածից գեսի Շիրակայ կողմն հասող մի վտակի առաջքն կտրեց ու նոր հուն բանալով՝ խառնեց Քաստի գետին, որով և Փոքր Շահ - Արասից արտօնութիւն ստացաւ գետից տասն ջրաղացի ջուր վեր առնել, նոյնուի և Հրազդան գետի ջուրն աւելացրեց Աւանայ ծովից նոր ջրանցք բանալով \*):

Փիլիպոս Պօլսեցւոց թախանձանաց զի՞անելով՝ պատրոսատուեց գնալ Կոստանդնուպոլիս՝ տեղւոյն խառնակ գործերը կարգաւորելու. որովհետեւ փառուսէր անձինք մինչեւ անգամ՝ աշխարհականներ պատրիարքական աթոռան էին բորձրացել մեծամեծ գումարներ վաճանելով, որով թէ իրանք և թէ եկեղեցիքը ծանր պարտի էին ենթարկել։ Կիրակոս պատրիարք Արեւելցին և նորա փոխանորդ Յովհաննէս Ռւռհայեցին այնքան սերտ յարաքերութիւն էին սկսել լատինաց հետ, որ մինչեւ անգամ Կղիմէս Գալանոս լատին կրօնաւորը իրան բժիշկ կեղծելով և Վալաթիայում բնակութիւն հաստատելով, ոչ միայն մուտք էր գտել հայ ումանց աներում, այլ և հայ հոգեւորականի սրբեմ հագնելով պատրիարքարանում սկսել էր ուսուցանել հայ մանուկներին. Էջմիածնի նուիրուկ Դաւիթ վարդապետ պատրիարք դաւանալով զատի ենթարկեց, Կղիմէս Գալանորին, որ հազիւ կարողացաւ ազատաւել և նւրոպա փախչել գաղղիացւոց գեսպանի ձեռքով։ Բացի այս, Սոյ

կաթուղիկոնները սկսել էին գրաւել Եջմիածնի թեմերը իրանց ձեռնադրած եպիսկոպոսներին այդ վիճակիները ուղարկելով։

Փիլիպպոս այս ամեն չարեաց առաջքը տռնելու համար 1651 թուին մեծաշուրջ յուղարկաւորութեամբ և բազմաթիւ ուղեկիցներով դնաց Երուսաղէմ ուր եկած էր նաև Սոյ Ներսէս կաթուղիկոսը. չորս ամիս կացաւ Երուսաղէմում, Ա. Յակովրայ տաճարի քեմը բարձրացրեց և գասի հետ մարմարեայ գեղեցիկ յօրինուածովք սալարկեց. Ժողով կազմեց բարեկարգութեան և 13 կանոնիր սահմանեց որոշնալով նաև որ, իւրաքանչյւր կաթուղիկոս իւր վիճակի համար միայն եպիսկոպոս ձեռնադրէ. Ժողովոյ որոշումները հաստատելուց և Սոյ կաթուղիկոսին, Երուսաղէմայ Աստուածատուր պատրիարքին ու այլ ժողովականաց սուրբագրել տալուց յետոյ, ծովային ճանապարհով նաւեց դէպ ին. Պոլիս.

Փիլիպպոս Կ. Պոլում պատրիարքական աղմուկներին վախճան տալու համար Եղիազար Անթապցու տեղ՝ Մուղնեցի Յովհաննէս վարդապետին պատրիարք կարգել տուեց. Ժաղովարարութեամբ վճարեց Եկեղեցիների վերայ ծանրացած սարուքը և հաշոեցրեց քնիկներին նորեկների հետ, որոնց մէջ տնհաշտ տաելութիւն կար, որովհեաւ քնիկները միշտ բանանումէին նորեկների վերայ, և ըոլոր աղգային գործերը իրանք միայն էին կամենում կառավարել և ուղղութիւն տալ. Ընդունելով Լեհաստանի Նիկոլ եպիսկոպոսի զղջումը՝ նորան արձակման, իսկ Լեհաստանի Հայոց՝ օրհնութեան թաւղթ տուեց, սրբիչեաւ Սովոչէս կաթուղիկոս բանագրել էր Նիկոլ եպիսկոպոսին՝ նորա հակազգային գործոց և խառնակեաց, մոլի ու գայթակղեցուցիչ վարուց համար, և այսպէս ժողովրդեան անհուն համակրութիւնը և առատնուէրը հետ ունենալով՝ 1653 թուին հասաւ Եջմիածին, 1654 թուին ձեռք զարկեց ասճարի արեւմասան դրան կից կառուցանել զանգակատուն, բայց դեռ չաւարտած՝ 1655 թուին մարտի 25-ին 22 տարի հայրապետական իշխանութիւն փարելուց յետոյ վախճանուեց և թագուեց Ա. Հոխակմէի վանքում։



Ա. ԺՈՂՈՎ ԵՐՈԽՍԱՂԵՄԱՅ 1651 /թ. \*)

Ա. Էջմիածնայ և Սոյ աթոռոց կաթողիկոսների մէջ սէր և միաբանութիւն լինի և իւրաքանչյւր կաթողիկոս իւր վիճակի նուիրեալը ձեռնադրի և ոչ ուրիշները, եւ եթէ պատահի ուրիշի վիճակից ձեռնադրել մէկին, իւր վիճակի մէջ տեղաւորի նորան, և ձեռնադրուածը եթէ այն վիճակից փոխուի այլ կաթուղիկոսի վիճակ՝ անընդունակ լինի.

Բ. Նուիրեալն ևս իրանը թողած՝ իրաւունք չունի ուրիշ կաթուղիկոսի մօտ գնալ, այլ իւր կաթուղիկոսի մօտ պէտք է մնայ.

Գ. Առանց ժողովրդոց խնդրանքի և վկայական թղթերի չըձեռնադրուի ոք եպիսկոպոս:

Դ. Խչ պատճառաւ ևս լինի, մի եպիսկոպոս ուրիշի վիճակ ամեննեին չըլափշտակի.

Ե. Մի վիճակի երկու եպիսկոպոս, երկու առաջնորդ չըլինի՝ եթէ շատ կարեոր պատճառ չըկայ:

Զ. Եպիսկոպոսը չըհամարձակուի ուրիշի վիճակից ձեռնադրութիւն անել իսկ եթէ համարձակուի՝ ինքն էլ ձեռնադրուածն էլ լուծուին:

Է. Եպիսկոպոսը առանց իւր կաթուղիկոսի հրամանի եթէ կաշառքով կամ այլաղքեաց բոնութեամբ համարձակուի իշխել ուրիշի վիճակի, կարգալոյն լինի.

Ը. Մի վարդապետ (ծայրագոյն) չըհամարձակուի անխորարար վարդապետութիւն տալ ուրիշի, եթէ նուիրեալը ամենքի վկայութիւնով ուսմամբ, առաքինութեամբ հասակով և աստուածային երթիւղով կատարեալ չըլինի. որովհետեւ այս պատճառով շատ անկարդութիւններ և գոյմակղութիւններ մտան եկեղեցու մէջ. եթէ առ ոչինչ համարեն այս պատուերը, իշխանութեան տուողը իշխանութիւնից զրկուի իսկ առնողը անընդունակ լինի. \*\*)

Թ. Քահանայն և այլ ժառանգաւորը իւր եպիսկոպոսից ընդունի ձեռնադրութիւն՝ իւր ժողովրդի հաւանութեամբ. եթէ այսպէս չըլինի, կարգալոյն լինի:

Ժ. Եպիսկոպոսներին և քահանան երին սահմանեալ իրաւունքն ու հասոյթը եպիսկոպոսներն ու քահանայքը ստանան հայրապետական կանոնների համեմատ և միմեանց չըղբկեն, որի համար շատ տրտունջ ենք լսում միշտ:

(\*) Առաքել պատմ եր. 255—256.

(\*\*) Ը. յօդուածը, ի դէմս սոսկ վարդապետի՝ անգործադրելի է, վասն զի ձեռնադրութիւն և աստիճան տալը եպիսկոպոսաց միայն վերապահեալ է, իսկ պատմութեան մէջ յիշուած վարդապետները եպիսկոպոս են եղել և մեծ վարդապետ կոչուել են ծայրագոյն վարդապետութեան տստիճան ունենալուն և իւրանց աստուածաբանական հմտութեան ու ճարտար քարոզիչ լինելու համար:

ԺԱ. Քահանայք իրար չը զրկեն միմեանց ծուխ և հասոյթ յափշտակելով կեղծաւոր բարեձեռնութեամբ կամ այլազգեաց բոնութեամբ. այլ ամեն մինը իւր բաժնովը բաւականանայ. եթէ այսպէս չը լինի համարձակուողը կարդալոյն լինի.

ԺԲ. Երբ որ պատրաստվումն մի աղջկայ նշան դնել մի երիտասարդի համար այդ բանը կանայք կամ ժողովուրդը կամ քահանայքը առանց մանրակրկիտ քննութեան կամ առաջնորդի գիտութեան չը համարձակուին անելու. այլ քահանայք շատ անգամ քարոզեն եկեղեցում և յայտնեն բոլորին. որ եթէ մինը տեղեակ է նոցա ազգացեղութեանը ազգարարութիւնը լսելով գայ յայտնի. և այսպէս շատ քննութիւններից յետոյ եթէ նոցա (ամուսնացեալների) մէջ ազգացեղութիւն չը լինի. քահանայքը բոլոր քահանաների. և ժողովրդոց առաջը նշանը օրհնեն և հաստատուի գործը.

ԺԳ. Այրի քահանայքը. եթէ պարկեշտ և ծեր լինին և կամ սնուցանելու մանուկներ ունենան՝ եկեղեցում կենան. եթէ այսպէս չը լինի. գնան վանկերն ու անապատները. և եթէ չը գնան՝ ժառանգութիւնից և կարգից զրկուին:

### ԵԼ. ԳԻ.

Փիլիպպոսին յաջորդեց Յակովը Դ. Զուղայեցի, որ աշակերտելով Նոր Զուղայու առաջնորդ Խաչատուր վարդապետ Կեսարացուն, նորանից արելայ ձեռնադրուեց. 1616 թուին եկաւ եջմիածին, մեծամեծ ծառայութիւններ կատարեց և Փիլիպպոսի ժողովիկոսից եպիսկոպոս ձեռնադրուեց. կարգուեց Մաղարթայ Ս. Ստեփանոսի վանաց առաջնորդ և ի հիմանէ վերաշնեց նոյն վանքը, որ առաջ փոքր մենաստան էր:

Յակովը Դ. յաջորդելով Փիլիպպոս կաթողիկոսին՝ 1655 թուի ապրելի 8-ին ծաղկազարդի օրը սուրբ օծումն ընդունեց. նա հայ կական տպագրութիւնը ծաղկեցնելու համար Փիլիպպոսի նօտար Մարեցի Մատթէոս սարկաւագին Նւրոպա ուղարկեց. Մատթէոս Մարեցի Ամստերդամ քաղաքում իւր հաստատած տպարանը պարտքերի հետ իւր կենաց վերջին օրերում յանձնեց Ուշեղ Ս. Սարգսի վանահայր Երեւանցի Ասկան վարդապետի եղբայր Աւետիս տպարանը յանուն եջմիածնի վերակոչելով՝ Յակովը Դ. կաթողիկոսի հաճութեամբ ու յանձնարարականով իւր եղբայր Ասկան վարդապետ Երեւանցուն կամչեց Ամստերդամ՝ որ սկսեց յառաջ կտրել տպագրութեան գործը, հրատարակելով կրօնական և պատմական գրքեր ընդ որս և Աստուածաշունչ սուրբ գիրքը:

Ցակոսիր Դ. Զուղայեցի Փիլիպպոս կաթուղիկոսի սկսած զանգակատան շինութիւնը մեծ դժուարութեամբ աւարտելուց յետոյ 1658թուին անձամբ գնաց Ասպահան, կաթուղիկոսութեան հաստատութեան հրովարտակը ստունալով վերադարձաւ Եջմիածին և սկսեց շինութեան ու բարեկարգութեան հոգ տանել. ատարերիքայ Քրանցք շինեց (քանքան) Քասախ գետից մինչեւ մանքը, գետի ոո զմանքից մոքուր և վճիռ ջուր բերելով. արտօրէից ուսոգմտն համար շինեց երեք հատ լճեր։ մինը՝ վանքի հիւսիսային կողմը երեք վերստ հեռաւորութեամբ (Խոլակ), մինը՝ Հռիփոփմէից դեպ հիւսիս—արեւելք փոքր ինչ հեռաւորութեամբ, իսկ երրորդը՝ Մանկաստր կոչուած այգիների մօտ։

Մինչ Ցակոսիր Դ. Զուղայեցի այս շինութեանց հոգսերով էր զբազուած, ոմն Անուփրիսս անուն վարդապետ իւր մի քանի համախաների հետ սկսեց ըմբոստանալ կաթուղիկոսի դէմ, և բանակցիլ Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդ Եղիազար Անթապցու հետ, համոզելով որ գոյ Եջմիածին և խոստանալով կաթուղիկոսացնել նորան։

Անդիսպար Անթապցի, որ Պօլսոյ պատրիարքութիւնից ընկել էր Փիլիպպոս կաթուղիկոսի ձեռքով, մնալով Կ. Պօլսում՝ Փիլիպպոսի մահից յետոյ միացաւ Յավհաննէս Մուզնեցու հակառակորդների հետ և Մարտիրոս վարդապետ Կաֆոյեցու գործակցութեամբ Մուզնեցուն պատրիարքութիւնից հանեց, բայց ինքն ևս յը կարողացաւ որատրիարք դառնալ, որովհետեւ պատրիարքութեան թիկնուները շատ էին, որոնց մին էր ոմն Թոմա վարդապետ Յերիացի համախոչ Կղեմէս Գոլանոսի։

Այս խառնաշվամթ ժամանակին Երուսաղէմոյ Աստուածատուր պատրիարքն ևս Կ. Պօլիս եկաւ բողոքելու Յունաց դէմ, որոնք Հայոց իրաւասութեան հնթարկեալ հայր Արքահամի վանքը գրաւել էին։ Աստուածատուր պատրիարք տեսնելով թէ Հայոց մեծամեծները զբաղուած են իրանց պատրիարքարանի աղմուկներով՝ դիմեց Եղիազար Անթապցուն, և նորա ձեռքով ոչ միայն Հայր Արքահամի, այլ և Ս. Մինդեան տաճարի մի գրան իրաւունք ևս ստացաւ. ուստի և Եղիազարին իւր փոխանորդ նշանակելով՝ ուղարկեց Երուսաղէմ։

Եղիազար Երուսաղէմում մի մի թակոյի ոսկի և արծաթ գտնելով՝ մինչ պատրաստովումէր շինութիւնների ձեռք զարկել և ահա

Յոյնք առ իթ ունենալով եպարքոսի փոխու իլը՝ նորից յետ ստոցան Հ. Աբրահամու վանքը և ծանր ամբաստանութիւններ արին Եղիազարի վերայ, որ Աինա վտաչելով ազատուեց մահից: Աստուածատուր պատրիարքը ոչինչ չը կարողանալով անել, լքեալ սրտով վերադարձաւ Երուսաղէմ, իսկ Յոյնք հրովարտակ հանեցին սուրբ Յակովբայ վահրին ևս տիրելու և Եղիազարին գլխատել տալու:

Եղիազար Անթապղի այս հրամանի Երուսաղէմ հասնելը լսելով թանկագին ընծաներով կարողացաւ առ ժամանակ մի հրամանի կատարումն յետաձգել. այլ և, յաջողից Դամասկոսի կուսակարին մի թուղթ գրել աալ դէսի եպարքոսը թէ, Յունաց գանգտոները Հայոց մասին զրադարտութիւն են. թէ, որովհետեւ ամեն ազգ Երուսաղէմում իւր առանձին տեղն ունի այսպէս ևս Ս. Յակովբայ վահրը Հայոցը լինելով՝ անհնարին է Յունաց յանձնել:

Կուսակալը այս թուղթ ի հայիւ Եղիազարի թանկագին ընծաներով յառուկ պաշտօնէի ձեռքով ուղարկեց եպարքոսին: Եղիազար ևս առանձին մարդիկ ուղարկեց Կ. Պօլիս՝ յայտնելու գործի եղելութիւնը: Աստուածատուր պատրիարքն ևս գնաց Կ. Պօլիս: Դամասկոսի կուսակալը շահու ակնկալութեամբ իւր մօտ էր պահում Եղիազարին՝ խոստանալով Ս. Յակովը գարձեալ Հայոց յանձնել. բայց Եղիազար տեսնելով որ խոստան վախճան չը կայ, գալու խոյս տուեց գնալ Կ. Պօլիս, և դեռ տեղ չհասած՝ Թըլթըլեանց՝ մասնութեամբ բռնուեց, տարուեց եպարքոսի մօտ և յորացար տանջանքից յետոյ երկաթի կապանքներով երեսուն և չորս օր բանտարկուեց. վերջապէս ազատուելով բանտարկութիւնից՝ Եղիազող առիթ ունելով եպարքոսի խնջոյքը իւր որդու Կարնոյ կուսակալ նշանակուելուն համար՝ գիմեց եպարքոսին և արքունի հրովարտակով 1659 թուին Յունաց ձեռքից աղոտեց Ս. Յակովը վահրը:

Յովհաննէս Մուղնեցու անկումից յետոյ Կ. Պօլսոյ պատրիարքական աթոռը թափուր էր մնացած, և այսպէս մնալուն պատճառն էին տեղակալ կոչուող աշխարհական անձինքը: Տաճկաց կառավարութիւնը այս դրութեան վախճան տոլու համար առաջարկեց Հայոց անպատճառ պատրիարք ընարել. և մինչ Հայք երկարածումէին գործը՝ Թոմա վարդապետ Քերիացին ի տեղի 140,000 փողի 400,000 խոստանալով ի նպաստ արքունի գանձուն ստացաւ Կ. Պօլսոյ պատրիարքութեան իրաւունքը, իւրիքա-

ւասութեան տակ ունենալով նաև Երուսաղէմի պատրիարքութիւնը, և որովհետեւ ինքը Անդրիանանաւպօլսում եպարքոսի մօտ էր, Կ. Պօլսում իւր փոխանորդ կարգեց Նիկողայոս Թուլկարանցուն իոկ նորան գործակից՝ Բիրիացի Դաւիթ վարդապետին ու վանեցի թրթը լու կոչուած Աստուածատուր քահանային:

Այս լուրը առնելուն պէս՝ տեղակալ կոչուող աշխարհականք որոշեցին ամենեին չընդունել Թոմային և նորա համախոհներին. մինչ այս մինչ այն՝ Թոմա վարդապետ պատրիարքական շքով հառու Կ. Պօլիս. Տեղակալները տեսնելով՝ որ ոչինչ չը կարողացան անել, սկսեցին ժողովրդին գրգռել Թոմայի գէմ ասելով որ, նա պատրիարքարանի հարկը ծանրացրեց, ինքնակամ եկեղեցու իրաւունքը յափշտակեց և Երուսաղէմի աթոռար նուաստացրեց:

Ժողովուրդը գրգռուած այս շշուկներով՝ զիմեց եպարքոսի փոխանորդին բաւականութիւն խնդրելու՝ գահնկեց անելով Թոմային. բողոքը աւելի ևս զօրաւոր կացուցանելու համար յայտնեցին որ Թոմա հարազատ հայ չէ այլ կաթողիկ, և թէ, նա Եւրոպայից եկած է իրրել լրտես: Թովմա վարդապետ պարտաւորուեց և մնաց մահապարտների բանտում 29 օր, որին հակառակորդք բանտում՝ սուրճի հետ թոյն տուին և սպանեցին 1658 թուին:

Թովմայի կուսակցութիւնը իւր պարագլուխ թրթը Աստուածատուր քահանայի անուամբ Թլթլեանք կոչուած և նորա հակառակորդները երկար ժամանակ միմեանց գէմ զինուած՝ մեծամեծ չարիք հասցրին միմեանց և եկեղեցուն, ծանր տուգանքների ենթարկելով միմեանց և եկեղեցուն:

Այս խռովութեանց ժամանակ Եղիազարի ջանքով պատրիարք նշանակուեց իւր և Աստուածատուր պատրիարքի աշակերտ Մարտիրոս Կաֆայեցի, որ եկեղեցիների վերայ հազարական դահեկան տուրք նշանակեց՝ տուգանքներից և այլ ծախսերից առաջացած պարագը վճարելու համար: Այս բանն ևս մեծ խռովութեանց տեղի տուեց և Մարտիրոս Կաֆայեցի Թովմայի մահուան տուգանքը վճարելու հրովարտակը եկեղեցում կարդալ չը թողելուն համար մի քանի գլխաւորների հետ մահապարանների բանալ դրուեց և թէե շուտով միջնարդների ու ծանր ընծաների շնորհիւ ազատուեց, բայց դարձեալ քառասնօրեայ արգելանքի ենթարկուեց պատրիարքութեան հարկը իտեղի 140,000 փողի՝ Թովմայի խոստացած 400,000 փողը չմարելուն համար: Զեռնտուութեամբ

Տիվրիկցւոց՝ որ շատ փարթամացած էին Կ. Պօլսում՝ աեղւոյն առաջնորդ Ղազար վարդապետ պատրիարք դարձաւ, իսկ Շաբախը բաս Կաֆայեցի գալով էջմիածին՝ Յակովը կաթողիկոսից ձեռնապրուեց Խրիմու Եպիսկոպոս։ Ղազարի ձեռքից էլ պատրիարքութիւնը ձեռնառութեամբ Թըլթըլեանց խլեց էջմիածնի նուիրակ ամն Յովհաննէս Թութունջի մականուանեալ, որ ժողովրդիան անունով մի Հանրագրութիւն պատրաստել տուեց, որով յայտնու մէր որպէս թէ Կ. Պօլսեցիք կամենալով էջմիածնի իրաւասութեան տակ մնալ՝ Տիվրիկցի Ղազարին գահընկեց են արել և տեղը էջմիածնի նուիրակութեան արդիւնքով կարգել են էջմիածնի Հարազատին ու խոստանուամեն նորա պատրիարքութեան Հասոյթից էջմիածնի նուիրակութեան ծախսեալ զրամները հետզիւ էջմիածնի ուղարկել։

Թղթակիցները Կ. Պօլսից հազիւ էին հեռացել՝ Տիվրիկցի Ղազարի կուսակցաց մասնութեամբ բանուեցին և ծանր առուգանքներով հազիւ ազատուեցին։ Իսկ Յակովը Զուդայեցի լսելով Յովհաննէս վարդապետի արարքը՝ զոյրացաւ և գրեց Կ. Պօլսեցւոց թէ, Ղազարի յայտնի ատելութիւնը դէպի էջմիածնի՝ իրան ատելի էր կացուցանում ժողովրդեան մօտ և էջմիածնին սիրելի, իսկ Յովհաննէս իւր կեղծուորութեան շնորհիւ թէ իրան և թէ էջմիածնինը ատելի ոլիսի դարձնէ ժողովրդեան։ Կաթողիկոսի այս թղթովն Յովհաննէս ատելի ևս ատելի դարձաւ ժողովրդեան և գահընկեց եղաւ, բայց և շուտով դարձեալ պատրիարքութեան իրաւունք ստացաւ Եղիազար Անթապցու և Թըլթեանց ձեռքնուութեամբ, որոնք յաջազել էին իրանց կողմը յանկուցանել հակաւակ էջմիածնի ցանկութեան՝ էջմիածնի նուիրակներին։

Ճարտար, Հնարագէտ և գործունեայ Եղիազարը, որ Պօլսոյ պատրիարքութիւնից արձակուելուց յետոյ Երուսաղէմի պատրիարքի փոխանորդ կորգուելով՝ Երուսաղէմում Հայոցս վերաբերեալ տնօրինական տեղեաց իրաւունքը պահպանելու համար մեծամեծ նեղութիւններ կրել էր, 1663 թուին առիթ ունենալով Սսոյ Խաչատուր կաթուղիկոսի Երուսաղէմում լինելը, և էջմիածնի միաբան։ ոմն Անոփիրիսս վարդապետի ու նորա Համախոհների զրոյումը, կամեցաւ գոնէ Տաճկահայոց վերայ կաթուղիկոս լինել, ուստի Խաչատուր կաթուղիկոսի հետ դաշն կապեց որ նա Կիլիկիայի կաթուղիկոս մնայ։ իսկ ինքն՝ սնացեալ Օսմանեան Հայոց։ Այս դա-

շինքից յետոյ մինչ Խաչառուր կաթուղիկոս Կիլիկիա վերապառ նալիս ուն Անդէաս ասորու Ասորոս հակաթոռ կաթուղիկոս էր օծում Բերիայում, Դաւիթ վարդապետ Բերիացի գրգռուած Սոտ բուց միւս կաթուղիկոսից, գնաց Կ. Պոլիս և զանազան մեղադրութիւններ բարդելով Խաչառուրի վերայ՝ Սոյ կաթուղիկոսութեան իրաւունք ստացաւ, և Սիօ հասնելով կաթուղիկոս օծուեց: Խաչառուր կաթուղիկոս Սոյ և Եղիազար վաւթացին Կ. Պոլիս առաջինը՝ իւր ձեռքից յափշտակուած կաթուղիկոսութեան համար բողոքելու, իսկ երկրորդը՝ Օսմանեան Հայոց վերայ կաթուղիկոսութեան հրովարտակ ստանալու, որ և ստացաւ եպարքուի մօտ մեծ աղջեցութեան տէր Ապրո չէլէպիի խորհրդով և լուելեայն վերագարձաւ ներիա, ուր հրաւիրեց նաև Խաչառուր կաթուղիկոսին՝ կաթուղիկոսական օծումն ընդունելու համար: Կ. Պոլսեցիք երբ իմացան այս՝ ափշեցին և Երեմիա չէլէպիին, որ բանագէտ ու գրագէտ մարդ էր՝ ուղարկեցին Եղիազարի մօտ համոզելու ար նա հեռի մնայ ազգը երկպառակող իւր խորհրդից: Սակայն ոչինչ արդիւնք չտնեցաւ Երեմիա չէլէպիի պատգամաւորութիւնը, և Խաչառուր կաթուղիկոս ներիա հասնելուն պէս տեսնելով Եղիազարի հրովարտակը նորան 1664 թուին կաթուղիկոս օծեց: Եղիազար կաթուղիկոսութեան հետ ստացել էր և Երուսաղէմի պատրիարքութեան իրաւունքը, բայց երբ հասաւ Երուսաղէմ, Աստուածատուր պատրիարքից տեղոյն կուսակալի ձեռքով մերժուեց, ուստի և սկսեց դեգերել Եգիպտոսում, Դամասկոսում և այլ տեղեր: Կ. Պոլսոյ ժողովուրդը սկսեց երկպառակուիլ, մի մասը՝ մանաւանդ Պարսից երկրից գալթածները, որ Ա. թ և Ելի էին կոչվում՝ Էջմիածնի կողմն էին, իսկ Անատոլիացիք և Կ. Պոլսոյ բնիկները մեծ մասամբ Եղիազարի կողմն էին:

Յակովիր Դ. կաթուղիկոս Զուզայեցի այս շփոթութիւնը և խուռավութիւնը հանգարանեցնելու համար ամենայն տեղ սիրոյ և խողագութեան գրեր ուղարկեց և յատկապէս Երուսաղէմ ու Սիօ, յատուկ պատգամաւոր ուղարկեց նաև Եղիազարի մօտ համոզելու որ խռովութեան պատճառ չը դաւնայ:

Էջմիածնի ի սրուէ համախների թելադրութեամբ և հարուստ ընծաներով հրապուրած Դամասկոսի և այլ տեղեաց կուսակալները ինդրակներ կարգեցին Եղիազարին կալանաւորելու, բայց նա ծրագրեալ տաճիկ վաճառականի տարազով, ինչպէս շատ անգամ արել

էր, մեծամեծ դժուարութեամբ հասու Ա. Պօլիս ու այնտեղից Անգրիան օպօլիս, ուր էր եպարքոսը, և թէ եւ չը յաջակեց Երուսաղէմի պատրիարքութիւնը ձեռք թիրել, բայց Ապրօ չէլէովիի օգնութեամբ հաստատուեց իւր կաթողիկոսական իշխանութեան մէջ:

Այս խռովութեանց վերջ տալու համար Յակովիք կաթուղիկոս Զուզոյեցի գնաց Զմիւռնիա, և Կ. Պօլիս գնուլու տեղ՝ Երուսաղէմ գնաց Աստուածատառը պատրիարքի ու նորա փոխանորդ Մարտիրոս Կաֆոյեցու հետ նախապէս խորհելու համար:

Մինչ Յակովիք Երուսաղէմումն էր, Եղիազար կաթուղիկոսական հրովարտակի հետ ստանալով նաև Երուսաղէմոյ խնամակալութեան իրաւունքը, երբ վերագաւանումէր Երուսաղէմ, Թրլթրեանը յայտնեցին կառավարութեան թէ ծանր ամբատանութիւն ունին Եղիազարից, ուստի և զինուորների միջոցաւ Եղիազար Բուրսայից յետ գործաւ Պօլիս՝ ուր սկսեց հետզհետէ յարգելի և համակելի գառնալ իւր պերճախօս քարոզութեամբն և վայելու վարժունքով:

Եղիազարի յաջողութեան լուրը Երուսաղէմ համելուց յետոյ Եղիազարի մասին Աստուածատառը պատրիարքից և աեղոյն զատառորից ամբատանութեան թուզի առնելով Մարտիրոս Կաֆոյեցի հասու Կ. Պօլիս, և սկսեց Թրլթրեանց ու Երմելոցի կոչուածների միամին Եղիազարի դէմ գործել. բայց Եղիազար եպարքոսի խորհրդակից Ապրօ Զէլէովիի հրահանգութեամբ և Մարտիրոսի Կաֆոյեցու անխարհուրդու յաղդողդ վարժմանց շնորհիւ 1666 թուին ստացաւ նաև Երուսաղէմի պատրիարքութիւնը, Կ. Պօլսից շրջարերական թղթեր ու զարկեց ամենայն աեղ և Երուսաղէմ ուստուիրելով Երուսաղէմոցւոց որ, եթէ Յակովիք կաթուղիկոս ուխոփ համար եկած է՝ սիրաշահելով ճանապարհ զնեն, իսկ եթէ ոչ, իսկոյն արտաքսեն: Յակովիք իմանալով այս՝ ինքնին զուրս եկաւ Ո. Յակովիքեանց վանկից և գնաց Յանաց վանքը, և վերջապէս վեր առաջ պարտաւց պարտաւելուների հետ եկաւ Կ. Պօլիս:

Եղիազար նախ քան Երուսաղէմ վերագաւանալը՝ Կ. Պօլսում մեծ հանգիստ եօթն եպիսկոպոսաներ ձեռնադրեց, և ճանապարհ գորս գաղուց յետոյ միայն լսեց Յակովիքի Կ. Պօլիս գալը, Յակովիք Իւշկիւդապում ընակութիւն հաստատեց և նորա գալստեան լուրն առնելով ոչ միայն Թրլթրեանը և Արմելոցիք, որ Եջմիածնինախառնախին գրի գէռն էին սատնանել, յայցելութիւն շտապեցին, այլու-

քաղաքի հայազգի մեծամեծները և նոյն ինքն Եղիազարի պաշտպան Ապրօ չէլէպին:

Յակովի Դ. իւր քաղցր բնաւորութեամբ և առաքինի վարքով գրաւեց նուե Եղիազարեանների սիրտը՝ գնաց Ազրիանօպոլիս, Եղիազարին պատրիարքութիւնից արքունի հրովարտակով հանելուց յետոյ՝ Մարտիրոս Կաֆայեցուն Երուսաղէմի պատրիարք՝ իսկ Ապրօ Թէքիրդազցուն՝ Պօլսոյ պատրիարք կարգեց և Օսմաննեան Հայոց վերայ ևս կամուղիկոսութեան հրովարտակ ստանալով 1667 թուին վերադարձաւ Եջմիածին:

Եղիազար հաճելով Երուսաղէմայ և Դամասկոսի կուսակալների սիրառ գարձեալ սկսեց վարել կաթուղիկոսութեան և պատրիարքութեան իրաւունքը իսկ Մարտիրոս Կաֆայեցի մնալով և. Պօլսում՝ միշտ խոռվութեանց պարագլիսի գերը սկսեց իսապատ որովհետեւ Սորգոսի մահից յետոյ երբ կոմենտամէր պատրիարք գառնալ, ժողովուրդը յընդունեց նորան այլ ընտրեց Եջմիածնի միտրան Մեղրեցի Առեփան վարդապետին, որ զգօնաւիտ մարդ լինելով՝ մինչեւ իւր մահը 4 տարի խաղաղութեամբ վարեց իւր իշխանութիւնը:

Կ. Պօլսոյ պատրիարքութիւնը շնորհիւ Թրլթրլեանց և Մարտիրոս Կաֆայեցու կարձ ժամանակով խաղալիք մնաց Յովհաննէս Ամասիացու, Անդրէաս և Կրուէ (Կարապետ) կոչեցեալ ագէտ քահանաների ձեռքը, մինչեւ անգամ Օսմաննեան բանակի հացագործ Եքմէքչի Առրգիս ուն ստանալով պատրիարքութեան իրաւունք, քահանոյ ձեռնազրուեց և սկսեց վարել իւր իշխանութիւնը:

Յակովի Դ. Զուղայեցի այս ջարեաց առաջքը աւնելու համար 1679 թուին յընայելով իւր ծերութեան՝ նորից հասաւ Պօլիս և, խողազութեան հնար գոնելու համար հրաւիրեց նուե Եղիազարին, և խորհրդավով Երեմիս չէլէպիի՝ Մարտիրոս Կաֆայեցուն ուղարկեց Երուսաղէմ Եղիազարի հետ հաշտուելու:

Պենտեկոստէի տօնից յետոյ երբ Եղիազար պատրաստվումէր Կ. Պօլիս գնալ, Յակովի Դ. Զուղայեցի հիւանդացաւ և 82 ապրեկան հասակում՝ 1680 թուի 0գոստոսի 2ին վախճանուեց ու մեծ պատուով թաղուեց Բէյօղլուի հասարակաց գերեզմանոցու և \*):

(\*) Զամշեան ասումէ որ Յակովի կաթուղիկոս պապին հպատակութեան և մահուան անկողնում ուղիղ հաւատց (կաթողիկութեան ——) դա-

Յակովիք Դ. կաթուղիկոսի օրով այս ընդհանուր խառնաշփոթութեան ժամանակ, և Հաստանի Նիկոլ Թորոսովից եղիսկոսոսի պատճառով մեծ խռովութիւն կար այնուղի հայերի մէջ ևս\*) Նիկոլի պատճառով, որ Մելքիսէթից հակառակ ժողովրդեանցանիութեան 1628 թ., եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ իւր ապօբէն գործերով ժողովրդին միշտ առելի մնաց, վասն զիս թէ իւր իշխանութիւնը բռնի հաստատել տալու և թէ իւր սեղեիսներին բառականացնելու համար վատնումէր եկեղեցու գոյքը, որ մեծ զայթակղութիւն էր պատճառում՝ ժողովրդեան։

Նիկոլ եկեղեցուկան կանոններից շեղուելու համար յանդիմանութիւն ստաց ոծ լինելով Էջմիածնի նուիրուկ Գրիգոր Անսարացուց նորա դէմ վրէժինդրութեան համար նախ եկեղեցու գոները փակեց և առա քաղաքական իշխանութեան ձեռքով յետ գործից նորան որպէս Օսմաննեան տէրութեան լրտես։ Այս բանը նոյնպէս մեծ զայրոյթ պատճառեց ժողովրդեան մէջ։ Մոլուկ կաթուղիկոս ժողովրդին և Նիկոլին հաշտեցնելու համար Անսարացի Խաչառուը վարդապետին ուղարկեց Ելվով նուիրուկ։ Նիկոլ սկզբում կամեցաւ նուիրակին իւր կողմը գրաւելց բայց երբաւսաւ թէ, ոչ միայն իւր այս մոտադրութիւնը ըրկանարուեց, այլ և գտտաստանի է Հրուիրվում, ապաւինեց կաթողիկ բուկան Կարմելեանց վանքը և ընդունելով կաթողիկութիւն՝ մտաւ Հւռվլմայ գերիշխանութեան տակ։ Ժողովուրդը իմանալով այս վակեց եկեղեցու գոները, և ուխտեց բնաւ ըլնդունել տրացեալ Նիկոլին։ Բայց Նիկոլ շրջապատուած լատին կրօնաւորներով կաթողիկ ժողովրդով և զինուորականներս խորասկեց եկեղեցեաց դռները և տիրացաւ նոյա։

Ժողովուրդը այս բռնութիւնը տեսնելով՝ զիմեց կառավարութեան և, թէ և յարքունուստ Հրաման ստացաւ եկեղեցիներին տիրանալ, բայց աեսնելով թէ ոչ միայն Նիկոլին այլև ամբողջ կաթողիկութիւնը իւր դէմ ունի, ինքն ևս պարտաւորուեց ի վերին

ւանութեան թուղթ է գրել (Հատ. Գ. եր. 719), Սիմեոն կաթուղիկոս (Զամբո եր. 23—25) և Ըահ. Խաթուննեան (Ստոր. Կաթ. Էջմ. Հատ. Ա. 219—221) ոչինչ չեն գրում։ Զամչեանի աղբիւրներն են անյայտ Յիշատ. Պատմ. ։ Զուր ջանը։

(\*) Առաքել Պատմ. գլ. Ի՞ն և Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռվմայ Հրատարակ. Պ. Ա. Եղեան, ի 1884 ամի ի Ս. Պ. Բուրգ.

երեսս կաթուիկութիւն կեղծել՝ ներկայացնելով պատի գերիշխանութիւնը հաստատող հայերէն մի հին գրուածք։ Կառավարութիւնը պահանջեց որ այդ թուղթը վաւերացրած լինի կաթուղիկոսից, և երբ հայք լոելով Փիլիպոսոս կաթուղիկոսի Կ. Պօլսում լինելը շտապում էին գալ նորու մօտ վաւերացնելու յիշհալ թուղթը, Նիկոլ շտապից, և զղջմամբ 1652 թուին կաթուղիկոսից ներման և օրհնութեան թուղթ ստացաւ. վերագարձաւ Խլվով և զղջացում՝ սիսեց հովուել ժողովուրդը Հայաստաննեայց եկեղեցւոյ հոգւոյն համեմատ ժողովուրդը տեսնելով այս՝ շատ ուրախացաւ և իորոտէ հաշտուեց Նիկոլի հետո, որ սահմանեց ամեն տարի տօնել այս հաշտութիւնն ու միութիւնը։

Նիկոլ երկար ժամանակ չը կարագացաւ ժողովրդեան սիրոը զրաւած պահել իւր զեղծ վարք ու բարքով և եկեղեցական իրեղէնները վատնելու տրամադիր մոլութեամբ։ ուսաի և ժողովուրդը առեիթ ունենալով պատի նուիրակի Խլվով գալը յարաջար գանգատեց Նիկոլի վերայ։ Նուիրակը յուսագրելով ժողովրդեան թէ շուտով չարեաց պատճառն եղող Նիկոլին մէջտեղից կրան յ։ Կ. Պօլսում՝ յօգուտ սրապականութեան իւր սիրագործութեամբ յոյտնի Աղեմէս Գալանոսին Հռովմից բերել տալով՝ Խլվովի Հայոց ուսուցիչ և քարոզիչ կարգեց, և ժողովուրդը որ ի վերին երեսս միոյն կաթուղիկութիւն էր կեղծել՝ Աղեմէս Գալանոսի և Նիկոլի անխօնջ ջանքին երկար ժամանակ դիմացաւ և 1666 թուին առաջին անգամ Կամենից քաղաքում մատուցուած լատինական ծէսով սրապագով գրգռուած դադարեց եկեղեցի զնալուց։ Սոտուածային սուրբ խորհրդին հաղորդուելու և ըստ Հայաստաննեայց արարագութեան ժամակարգութիւն լսելու համար ժողովուրդը գնումէր մերձակայ քաղաքները, մինչեւ որ լատին կրօնաւորները քաղաքական իշխանութեան ձեռքով այդ ևս արգելեցին։ Խատին կրօնաւորները արգելեցին Ոսկան վարդապետի տպած գրքերի վաճառումն ևս\*), շատ աշխատեցին այդ տպարանը Խլվով փոխագրելով խրացնել\*\*), բայց տեսնելով թէ բոլոր ջանքը իղուր անցաւ, տպարանի Մարտէյլ փոխադրուած ժամանակ աշխատեցին խափանել\*\*\*), առարկելով թէ Ոսկան մոլորեցուցիչ և

(\*) Բանի միութիւն Հայոց Աեհաս, եր. 215—216. (\*\*\*) Կայն 45—46.

(\*\*\*) Կայն 232։

պապի գէմ գրքեր է հրատարակում։ Խոկ Ռոկանի Մարտէ լլում վախճանից յետոյ այդ տպարանը Հռովմաց հաւատոյ ծաւալման ժողովը յանձնեց մի կաթոլիկ հայ քահանակի \* )։

Այս հաղածանաց գոյժը հասաւ Էֆմիածին և Յակովը Դ. Զուզայեցի Թոխտառեցի Պօղոս եպիսկոպոսին ու դարկեց Խլվով նուիրակ, մի հնարք հնարքելու, որ ոչինչ յք կարողանալով անել լատինացւոց ձեռքով արտաքսուեց

Հայք ընդ երկար մաքառելուց յետոյ վերջապէս ձուլուեցին կաթոլիկութեան մէջ, իսկ Նիկոլ 53 տարի վէմ գլորման և քոր գայթակղութեան մնալով՝ 1681 թուին մեռու արհամարհուած և ատուած ամենքից և նոյն ինքն լատիններից՝ որոնք շողաքորդու մէին՝ քանի որ միութեան ինդիրը վերջացած չէր, իսկ վերջանալուց յետոյ՝ սկսել էին ատել։

( Ետքունակէլ )

Յ. Վ. Մ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐՈՆԻ ԵՒ ԲՈՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ \*\*).

Կրօնի՝ բարոյականութեան հետ ունեցած կապակցութեան մասին վաղուց արդէն փիլիսոփաներից, աստուածաբաններից բարոյագէտներից և կրօնախոյզերից շատերը յայտնած են զանազան կարծիքներ և հաստատութիւններ, որոնք քիչ կամ շատ եռանդով պաշտպանութիւն էին գտնուեմ. Յայտնի է օրինակ այն հայեացքը թէ հոգեկան կեանքի երկու ասպարիզում ոչ մի կապակցութիւն չըկայ և թէ երկուն ևս իրարից անկախ են։

Այս տեսակ գաղափարը մնաք գտնումնք առաւելապէս բնագէտների և նիւթապաշտների եղանակների ( system ) մէջ. սակայն թէ կրօնի և թէ բարոյագիտութեան և բարոյականութեան պատմութիւնն մերժումէ ամեն մի քայլում այդպիսի մի կարծիք բարոյականութեան անկախութեան մասին, որը նոր ժամանակներում յաձախ արտայայտած է « Revue des deux mondes » 1864—66 մէջ զանազան յօդուածներում Պ. Բուրնուֆ և մեծ եռանդով պաշտպանած է։ Նա այն հայեացքի լինելով՝ որ կրօնը բարոյա-

( \*) Բռնի միութիւն հայոց Լեհաստ. եր. 151.

( \*\* ) Այս յօդուածը թարգմանաբար առնումնք ուսուցչապետ Գոկ. Շուշի յօդուածից.